№ 9 ՇԱԲԱԹ 5 ՄԱՐՏԻ № 9

ՄԵԶՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԼՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ԱՄԵՆ ՇԱԲԱԹ ՕՐ ՄԻ ԹԵՐԹ. ՏԱՐԵԿԱՆ ԳԻՆՆ Է 6 Ռ. Գտարարաղարացիք դիմում են ուղղակի Ве редак. газеты „Пчела Армении".

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՆՑ ԱՄԲԻՆ 10 ՄԻԶՈՑԿ ՏԱՌԵՐԻ ՎՃԱՐՆ Է 1 ԿՈՊԵԿ: Գայտարարութիւններ ընդունվում են հայերէն եւ օտար լեզուներով

ԹԻՖԼԻՍ 5-ԻՆ ՄԱՐՏԻ

Վերջին ժամանակ, իրաւ է, մեր հրատարակական հրատարակութիւնը աւելի յարձակողական և յանդիմանողական դիրք բռնեցին: Բայց այս բնական էր, անհրաժեշտ հետևանք մեր հասարակական գործերի վիճակի ու գործակատար անձանց կամ դասակարգերի անուղղղ գործունէութեան, թէ կրքի և հաշիւների: Այն վիճակն ու դիրքը, որ մեր հրատարակութիւնը բռնած ունին և որոնց մէջ գըտնվում են մեր հասարակական գործերը շատ բնական են: Այդ բնական է ամեն ազգի, որ երկարատև խորը քնից յետ, շնորհիւ գիտութեանց և արհեստների զարթուում է, շրջահայում է և սկսում է քննել իւր գործերը, հաշիւ պահանջել իւր գործակատարներից, իւր առաջնորդներից, որոնք մինչև այդ ժամանակ կառավարում էին քնած կամ թուլութեան հետևանք տկարի գործերն առանց տիրոջ հաշիւ տալու:

Շատ պարզ բան է, որ մինչև յայժմ առանց սուգութեան (կնքարոլի) ինքնիշխանաբար գործերը վարողները պէտք է դժգոհ լինին իրանց տիրոջ առողջութիւնից և իւր գործերին վերահասու լինելու ցանկութիւնից:

Ո՞վք են մեր գործակատարները և ո՞րոնք մեր հասարակական գործերը:

Մեր գործակատարներն են մեր եկեղեցականք և ազնուներն (զանազան տիտղոսներով), որ ժամանակի ընթացքում իրանց պաշտօնի կամ կարողութեան զօրութեամբ հիւանդ և տկար ազգի խնամակալութիւնն և վարչութիւնն իրանց ձեռքն են առել:

Բայց այդ խնամակալութեան հետ կապել են և. իրանց անձնական կամ դասակարգական շահերն, որոնք իրապէս միասն են ազգին: Այժմ, երբ ազգը կաղդուրվելով զգում է իւր մէջ կարողութիւն անձամբ գործելու, մեր խնամակալներն, գործունէութիւնը միայն իրանց արատնութիւն համարելով, ասում են, որ նա չը գործէ և իւր խնամակալն գործածն էլ առանց քննելու ընդունէ: Այդ անհնարին և անբնական է, քանի ազգը առողջանալու վրայ է: Առողջն հիւանդի կերակրով յաւականանալ չէ կարող:

Այժմ ի՞նչ են պահանջում մեր խնամակալները: Ասում են, ինչոր անում ենք, մի քննէք, ձեր անտեսութեան հաշիւը մի՛ պահանջէք, ինչ էլ տանք, գոհ եղէք: Պարզ բան է, որ եթէ նոքա իրրև հասարակական գործակատարներ հանդէս չը բերէին իրանց անձնական շահերն, և գործէին միայն հասարակութեան համար, հանձնային իրանց պաշտօնին, այն ժամանակ և հասարակութիւնը կամ ազգը նոցա արած սխալներն անգամ ներելու էր նրանց, վանդի այդ սխալները կամ տգիտութիւնից և կամ անկարողութիւնից առաջացած կը լինէին: Մի՞թէ նկատված չէ, որ բաւական ժամանակ այս դիրքն էլ բռնած են մեր հրատարակութիւնը—միայն ուղղութեան փոխանակ աւելի յամառութեան անիրաւութեանց մէջ և աւելի վստահութիւն անկարգութեանց մէջ եղել են գործ հետևանքը: Ուստի և երբ նկատվում է, որ մեր գործակատարներն իրանց պաշտօնն և ձեռք բերած իշխանութիւնն, որ պէտք է յօգուտ ազգի վարէին, գործ են դնում ի վնաս նորա իւրեանց անձնական շահերի և նպատակների համար, անբնական կը լինէր, եթէ ժողովրդեան կողմից բողոք չը լինէր: Եւ ահա այս բնական բողոքին նոքա աշխատում են զանազան առնուններ տալ, կոչելով ապերախտութիւն, համակրութիւն, թշնամութիւն և այլն. իսկ բնական ձգտումն ազգի տեսնելու իւր պաշտօնատարներին արժանի և յարմար իրանց պաշտօնին կոչում են երկպառակութիւն:

Եւ ի՞նչ են պահանջում մեր պաշտօնատարները: Լռութիւն և կուրութիւն չը լսել և չը տեսնել, չհամանալու դնել և չհրատարակել ամեն անբնական երևոյթներն, ամեն բան, որ կատարվում է ի վնաս ազգի, սորա պարտադնց և անհատատրիմ պաշտօնեաներից: Կարելի՞ է կենդանի այսպիսի մեռելութիւն պահանջել:

Ի՞նչու են լինում այսպիսի պահանջներ: Հիմքը շատ պարզ է և ամենայն ճարտարութեամբ և սոփեստութեամբ պաշտպանվում, թէ մեր պակասութիւնները հանդէս հանելն ամօթ է և խայտառակութիւն, օտարները մեր վերայ կը ծիծաղեն, մենք ամօթով կենանք նոցա առաջ—նոքա վատ գաղափար կը տան մեր վերայ, մեզ երկպառակ, անհամաձայն, կռուասէր կհամարեն:— Բայց եթէ մեր ամեն թերութիւնք ծածկենք, չը հալածենք նրանց ոչընչացնելու համար—օտարը ի՞նչ կարծիք պիտի ունենան մեր վերայ, արդեօք չպիտի՞ կարծեն, որ մենք մեռած ենք, չպիտի՞ մեզ անզգայ համարեն, անընդունակ տեսնելու իւր շուրջը կատարվածն, որ օտարը անտարակոյս իրանք էլ տեսնում են: Այն ինչ բողոքն ու աղաղակը ժողովրդեան կողմից ընդհակառակն պիտի վկայէ նորա արթուն լինելուն, կենդանութեան և ընդունակութեան հոգալու իւր համար:

Այժմ թող ժողովուրդը հարց տայ այդ իւր պաշտօնեաներին, թէ իրան հարկ է մեռած ձևանալու և իւր կենդանութիւնն ծածկելու թէ պաշտօնեաներին կենդանալու և իրանց պատիժը ճանաչելու:

Ահա մեր ազգային կեանքի համառօտ նկարագիրը. ձեմարան և այլ դպրոցներ ունինք. բոլորն էլ անհատատար, պակասութիւններով լի, պակասութիւնք, որոնք հնարաւոր է ուղղել, եթէ սրտով և անկեղծութեամբ վերահսկեցողութիւն լինի նոցա վերայ և յարմարաւոր գործակատարք նշանակվին նոցա մէջ.—Լռե՞նք, երբ տեսնենք ուղղելի պակասութեանց շարունակվելը, երբ տեսնենք, որ նոցա մէջ գործելիս լինին անընդունակ խարդախ, ծիծղութիւնահոգի և անբարոյական անձինք—օտարը պատաներ ի՞նչ է, ապագայում մեկի տեղ տան վատ ուղղութեան տէր և ձևասակար պաշտօնեայք պատրաստվի՞ն եկեղեցու և ազգի համար:— Ձենք լռիլ, վանդի պարտադնց չենք կամենում լինել:

Եկեղեցականաց դաս ունինք—մեծ մասամբ տգէտ, անպատրաստ իւր պաշտօնին, վատ օրինակ տուող ժողովրդեան, սորա աստուածապաշտական հոգևոր առաջնորդ, նրան ժամանակի պահանջներին համաձայն չառաջնորդող—լո՞կ իւր շահին վերայ մըտածող. լռե՞նք, որ ժողովուրդը օր աւուր բարոյապէս վատթարանայ և տգիտութեան մէջ խրված մնայ—մի՞թէ հրնարաւոր է աչք փակել:

Ձենք լռիլ և չպիտի լռենք—վանդի պարտադնց գտանվիլ յանձն չենք առնում:

Ազգային կալուածներ ունինք, ելք և մուտք— եկեղեցական և վանքական—լռե՞նք, երբ տեսնում ենք, որ մեր աչքի առաջ անհատատարմութեամբ յափըշտակում են նրանց, չեն ծառայեցնում նրանց արդարութեամբ յօգուտ ժողովրդեան, չեն գործ դնում նրանց ի պայծառութիւն այնպիսի հաստատութեանց, որոնք ազգի պարծանք և բարոյական շահուց աղբիւր կարող են լինել: Ձենք կարող լռել—քանի հասկանում ենք, որ այսպիսի հանգամանքում լռութիւնը պարտազնութիւն է և սա յանցանք: Օրինաւորութիւն պահանջե՞ն ամենքից իրաւունք է, թէ օրինազանցութիւն պատժելը: Ժողովրդեան շահը հայ ազգի գործակատարների համար—օրէնք է: Հայ ժողովրդեան իւր շահուց դէմ գործողութիւն տեսնելն ու լռելը օրինազանցութիւն է և իւր պատիւը չճանաչել: Այս է և պէտք է լինի ծրագիրը հայ ժողովրդեան հասկացող մասի, որ խօսում է:

Հանդէսում անձնաւորութիւն չկայ—կաթողիկոսից սկսած մինչև յետին սիրացուն, իշխանաւորից և ամենահարստից սկսած մինչև յետին չքաւորը օրինաց ծառայեն: Օրինաց առաջ ոչոք արտօնութիւն չունի:

Պէտք է՝ լռենք հայ ժողովուրդը պարտազնց դատնվելով և շարունակից ինչպէս յիսնեակ շատ դարերի իւր մեռելութիւնը, վաղ իրապես, իսկ այժմ մեռեալ ձևանալով—ի՞նչ շահ նրան:

Անշուշտ մեր հինգասեր և շահասեր պաշտօնեաները պիտի ասեն—օտարք մեզ միաբան, սիրով կապուած կը կարծեն—մեզ կը գովեն (?), որ մենք կով ենք: Մեծ պատիւ մեզ: Իսկ մեր ներքին վէրքը, ով պիտի բժշկէ: Մի՞թէ և թոյնը շատ ախտութեանց դեղ չէ: Մենք հիւանդ ենք, և դեղը պիտի ընդունենք—մեր դեղը մեր պակասութիւնքը ճանաչելն է, հանդէս բերելն և նոցա դարման տանելը—բողոքելով անիրաւութեանց և ձևասակար գործողութեանց դէմ և պահանջելով օրինաւորութիւն և օգտակար գործունէութիւն: Թող խստութեամբ չվեհերեն մեր խօսքերը—մենք խիստ չենք և միշտ պատրաստ եմ մեր աչքում անհնարաւորի պահանջն, ինչպէս և հնարաւորը չկատարելու պղերգութիւնն ու պիտաւորութեամբ զանցառութիւնը:

Հասկանալի՞ է:

ԱԶԳԱՅԻՆ

Լսում ենք, որ տեղւոյս Հոգևոր իշխանութիւնը կամենալով բարեկարգութիւն դցել եկեղեցաց վարչութեան մէջ և ապահովել քահանայից վիճակը հաւասարապէս բաժանելով ժողովուրդը եկեղեցաց և քահանայից մէջ, մտադիր է եկեղեցաց յատկացնել ժողովուրդք, որոնք

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Մինաս Չերազ. Ազգային Դատարակութիւն (վարժապետական ժողովի մէջ խօսուած ճառեր. Կոստանդնուպօլիս, Արամեան տպագրութիւն. 1876 ք. 206 երես. դինն է 13 դրուշ):

Ա.

Մօտ օրերս պատահաբար մեր ձեռքն անցաւ պարոն Մինաս Չերազի այս նոր աշխատութիւնը, որ նուիրուած է աշխարհաբարի պաշտպանութեանը ընդդէմ էրզէրումեանների: Այդ դրքէն կ'երևի, որ Պօլսի բազմաթիւ հայ վարժապետների մէջ համարեա միայն պարոն Չերազն է աշխարհաբարեան, իսկ բոլոր միւսները գրաբարեան են և թշնամի աշխարհաբարի, ոմանք «սուրբ պարզութենէ» սոփուած և ոմանք չհամենդրութենէ թելադրուած:

Պարոն Չերազը մեր մինչև այժմ լսածները նոր բովէ հանելով և իւրեան ծայրահեղ վստահութիւն տալով (գուցէ իւր միամտութենէն սոփուած) անխնայ կ'անդամահատէ գրաբարի դիակը և ցոյց կուտայ նորա պաշտօնեաներին իւրեանց կուռքի խախուտ կազմուածքը: Մեր կողմերի համար այդ խնդիրն արդէն հնացել է և չունի ոչինչ նշանակութիւն, ըստ որում մեր բոլոր ուսումնարանների մէջ աշխարհաբարն իւր տեղն ունի և գրաբարն իւրը: մեզ համար աւելի հետաքրքրական է այժմ մեր նոր լեզուի մշակութեան խնդիրը, որ պարոն Չերազի ձեռքով նոր կերպարանք կստանայ, և այս կողմանէ նա աւելի կզբաղէ մեր ուշադրութիւնը:

Այդ առիթով ես կուզպիմ ահա իմ նուաստ կարծիքս յայտնել մեր նոր լեզուի մշակութեան մասին, նախապէս մի քննական հայեացք ձգելով պարոն Չերազի ընդունած այն մի քանի ձևերի վերայ, որոնք չատ անդուրեկան են մեզ համար և չենք կարծեր, թէ դոքա քաղցր հընչեն և նոյն իսկ Տաճկաստանի հայերի ականջին:

Բ.

Պարոն Չերազը մի հոլովման կ'ընդունի միայն և միօրինակ կը հոլովէ բոլոր հոլովների բառերը բացի դերանուններէն: Եթէ պարոն Չերազի նպատակն է մայրենի լեզուի ուսումը հեշտացնել հայ մանուկների համար, ապա մենք կարող ենք ասել, որ մի հայախօս աղայի համար աւելի հեշտ է ասել հօր, մօր, քրոջ, տիրոջ, տան, համարելու, գործուելու, նայեն, քան թէ ասել մայրի, տունի, համարելի, գործուելի, ըստ սրում այդ ձևերն աղգային չեն: Գուցէ պիտի դայ ժամանակ, որ մեր տարբեր հոլովումները միօրինակութիւն ստանան, բայց մեծ վստահութիւն կը լինէր այժմէն իսկ գուշակել, թէ երբ և իցէ մեր ժողովրդի լեզուն այնպիսի տրամադրութիւն պիտի ստանայ, որ բնական դառնայ նորա համար արտասանել համարելի, գործուելի և այլն: Ա՛ռ այժմ մենք կասենք, որ այդ արուեստական միաձևութիւնը հակամանկավարժական է և մայրենի լեզուի ոգւոյ հետ ոչ մի կերպ չհամաձայնող:

Ուրիշ մի քանի ձևերի վերայ ևս մենք կարծում ենք, որ պարոն Չերազի ընդունած ձևերն աւելի հեշտ են արտասանվում, քան մեր ունեցածը և այլ մի բոլորովին օտար ձև: Ուշադրութեան արժանի է նոյնպէս, որ մեր նոր լեզուի դժուարութիւնը հոլովումների մէջ չէ, որ ընդհակառակն շատ հեշտ է, այլ բայերի մէջ, որոնց ձևերը չէ տուել պարոն Չերազը: Եթէ անհնար է դժուարը հեշտացնել, հարկ չը կայ հեշտը դժուարացնել:

Այն բառերը, որոց մէջ հոլովման ժամանակ ո և ե ձայնաւորները կը փոխուին ը (թէև դա չի գրուիր սովորաբար), պարոն Չերազը կը հաւասարեցնէ առանց փոխելու կամ կորցնելու. այսպէս կը գրէ՝ սրտի, խիղճի, կրի, սուրի, ջուրի զիրի, սուրեր, ջուրեր, զիրեր, նայն, բայց չի գրեր զիրական, խիղճահար, սիրտառուչ նայեն, որ յայտնի հակասութիւն է: Այսպէս կը գրէ նաև միտ, միտեր, լսող, լսողներ, գիր, գիրեր, պարտ, պարտեր նայեն, վերացնելով գոյա վերջէն ո տառը: Արդարև մենք կ'ասենք բարեխօս, բարձրաձէն, պարզամիտ, անօրէն, միով բանիւ բարդութիւնների մէջ չենք գործ դներ ո տառը, բայց մինչ մեր կենդանի լեզուի մէջ միևնոյն նշանակութիւնն ունին ասել «մէկտ պահիր» և «միտքդ պահիր», կամ մինչ միևնոյն նշանակութիւնն ունին դէր և դէրտ, մինչդեռ առաջինը բայ է և երկրորդը գոյական անուն, ինչպէս միև նոյն չեն էջ և էջտ, ձէր և ձէրտ, որոնք չի չփոթեր լինքը պարոն Չերազը:

Լեզուի հետ այս ձևով վարուիլը ոչ թէ մշակութիւն է, այլ կրճատութիւն, այդ բառի հին նշանակութեամբ: Ցիրաւի այդպէս կը վարուէին հին դաստիարակները թէ աշակերտների և թէ գրականութեան հետ, այդ արհեստն անուանելով կրճատութիւն, որ կը նշանակէր տաշել, յըղկել, քշտել, յապաւել, ինչպէս օրինակ ասէին ի՛ր՛ե՛ն ի՛ր՛ի՛ն՛ս՛: Այժմ մշակել մի որ և է գործ բանաւոր մարմին, կը նշանակէ նորան իւր բնութեան համաձայն աճեցնել, զարգացնել, բարւոքել: Եւ որովհետև լեզուն, գրականութիւնը, գործարանաւոր մարմին է, կենսունակ է, նորա մշակութեան ժամանակ պէտք է չատ զգոյշ լինինք, որ չը լինի թէ նորա կենսատու ջիղերը կտրատենք:

Պարոն Չերազը չատ վստահ և աներկիւղ է այդ կողմանէ. նա անհնարս կը կրճատէ և ոչ դերբայը՝ ասելով գաղ (գնող), գառօղ, հասօղ, դրօղ (դնող) նայեն: Մեզ յայտնի բարբառների մէջ, ինչպես և գրաբարի, այդպիսակ ձևեր չկան, ուրեմն ինչու՞ ասել այնպէս բան, որ հայերէն չը լինի: Մեր նոր լեզուի մասին պատասխանը կը չարունակէ իւր կրճատութիւնը և հասնելով ը և ն որոշիչ յօգերին, կը կտրէ մի կողմ կըձգէ ը յօղը որ ամենայն տղոյ աչխարհաբարեան է, գործ չունի միայն ձայնաւոր տառերի մօտ, այլ այդ տեղը ն յօղին կուտայ և այսպէս նորա չնչին օգնականութեամբ կը չարունակէ իւր պատմնը: Ժողովուրդը կասէ «Մինասը գնաց» և ոչ «Մինասն գնաց». և մինչ առաջին ձևն աւելի վայելուչ և դիւրաւնչիւն չէ քան երկրորդը: Այսպէս և կասեն «Մինասի գիրքը ջուրն ընկաւ» և ոչ «ջուրը ընկաւ»: Պէտք է որ այս ձևերն աւելի հաճելի թուին պարոն Չերազին, քանի որ նա կը սիրէ աւելի վայելուչն ընտրել ասելով գ'աւ է ասել կոնաւ քան թէ կոնաւ, մենք համաձայն չենք այդ ծայրահեղ վայելչութեանը:

Պարոն Չերազը ն յօղի չատկութիւնը լաւ չէ ուսումնասիրել, ըստ որում ինչպէս կ'երևի իւր գործածութենէն զորան որպէս դիմորոշ կ'ընդունի միայն, մինչդեռ զա ոչ միայն դիմորոշ է այլև բառարոշ է, և այդ պատճառով երկու պաշտօն կը կատարէ: Մինչ դեռ ա և ը յօղերը սահմանափակուած են գլխաւորապէս եզակի թուի մէջ, մինը կորոշէ միայն առաջի դէմքը և միւսը միայն երկրորդ, ն յօղը զոցա հակառակ ամէն դէմքի և թուի մէջ տեղ կը բռնէ: Գուցէ այս չփոթութիւնը լինի պատճառ, որ պարոն Չերազը կասէ «Արչակի գիրքն և նորա գիրք», գաչտի ցորեանն» և «նորա ցորեան»: Մեր կարծիքով եթէ կարելի չէ ասել «նորա գիրքն» այլ պէտք է ասել «նորա գիրք» ապա և ոչ կարելի է ասել «Արչակի գիրքն, այլ պէտք է ասել Արչակի գիրք»: Եւ ընդհակառակն: Դոքա յայտնի հակասութիւններ են, իսկ մեր ժողովուրդն ազատ է այդ հակասութենէն: Մեր բոլոր սեռականները համազօր բառեր են, միապէս ստացական, միապէս յատկացուցիչ և միապէս ածական: Բոլոր բարբառների մէջ (բացի վանի գաւառապետէն) ն յօղի գործածութիւնը այնքան պարզ է, ինչքան և ոչ անորոշ: Եթէ մի որևիցէ բառ անորոշ է, նորա մօտ ն բառը կդրուի, իսկ եթէ որոշ՝ և

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Ի՞նչ է ազգը

Ազգ բառը ամենից հաճախ գործածվում է ոչ թե իր ճշգրիտ նշանակությամբ, այլ ընդհանրապես մարդկանց խմբի, հասարակության, ժողովրդի, ցեղի, ռասայի, լեզվի, կրոնի, պետության, ինչպես նաև ընտանիքի, տոհմ

ՎԱՆԱՅ ՀԱՅՈՑ ՎԱՆԱՔԱՂԱՔԱՑԻ

Ամսագիր հրատարակվում է ամեն ամսի 2-ին։ Բաժանորդագրության գինը տարեկան 3 ռուբլի։ Առանձին համարը 30 կոպեկ։ Ընդունվում են նաև գովազդներ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ա. Ա. Ալիխանյան — Ներածական խոսք 1
Ա. Ա. Ալիխանյան — Ազգային ինքնագիտակցության մասին 2
Ա. Ա. Ալիխանյան — Ազգային ինքնագիտակցության մասին (շարունակություն) 5
Ա. Ա. Ալիխանյան — Ազգային ինքնագիտակցության մասին (շարունակություն) 8
Ա. Ա. Ալիխանյան — Ազգային ինքնագիտակցության մասին (շարունակություն) 11
Ա. Ա. Ալիխանյան — Ազգային ինքնագիտակցության մասին (շարունակություն) .....

Միջհատ վաշայի պահանջած փոփոխութիւնքը մի քանի կառավարչական անձանց։ Սա էր առիթը այս նամակին։

Նորին մեծութեան Սուլտանին.

Ձերդ մեծութիւն, հրատարակելով սահմանադրութիւն, մեր նպատակն էր, որ միանգամով վերջ դնվի արքունեաց բռնութեան, ցոյց տալ ձեզ ձեր պարտակատնութիւնքն և սեպհականել մեզ մերը, հաստատել իրաւանց կատարեալ հաւասարութիւն քրիստոնէից և մահմետականաց մէջ և եռանդով աշխատել երկրի վերածնելու թեան համար։ Երեսուն տարուայ ընթացքում լոյս տեսան բաւական ամենատեսակ հատորներ և ֆիրմաններ, և սրանցից իւրաքանչիւրը ժամանակակից է նշանաւոր քաղաքական դէպքերի երևման։ Բայց երբ վտանգն անցնում էր, մենք խոկոն մոռանում էինք, թէ ինչու համար էին երևան եկել այդ հատորները։ Մի կարծէք, թէ սահմանադրութիւնը հրատարակած է միայն նորա համար, որ դրա նով վերջանայ արևելեան հարցը։ Ես չիշեցի պարտականութիւնք. ամենից առաջ ձեր մեծութեան վայել է ճանաչել այն պարտականութիւնքն, որ ձեզ ման և բաժին ընկել են, որպես զի այն անձինք, որոնք իրանց վերայ առել են բոլոր տէրութեան պատասխանատուութիւնը, գիտենան, թէ ինչպէս պէտք է վարվին։ Ապա հարկ է և մեզ նախարարներիս ծանօթանալ մեր պարտաւորութեանց. սրանով ես կամենում եմ ասել, որ մենք պէտք է հրաժարվինք մշտական կեղծաւորութեան և շողոքորթական եղանակից, որոնք ահա չորս դար է, որ իշխում են մեր տէրութեան մէջ։ Ես յարգում եմ ձեր օգոստափառ անձնաւորութիւնը, յարգում եմ ձեր ընտանիքը. բայց չեմ կամենում այս յարգանքն ի գործ դնել ի վնաս իմ հայրենեացս։ Իմ պատասխանատուութիւնս մեծ է. բայց ամենից աւելի ես սարսափում իմ պատասխանատուութիւնից իմ խղճմտանացս առաջ, որովհետև նա ստիպում է ինձ աշխատելու յօգուտ իմ հայրենի երկրին։ Ես վախենում եմ այս պատասխանատուութիւնից, որ կարող է հաշիւ պահանջել ինձնից իմ գործողութեանցս մէջ։ Հասկացէք իմ խօսքերիս բուն նշանակութիւնը—ես երկնչում եմ խղճիս և Օսմանեան ազգի յանդիմանութիւնից, բացի սրանցից ես ոչընչից չեմ վախենում։ Օսմանցիք—իրանց պարտաւորութիւնքն ունին, նոքա նրանց ճանաչեցին և կատարեցին. մենք պէտք է նրանցից օրինակ առնունք։ Ամենից առաջ մենք կազմում ենք սահմանադրական տէրութիւն. բայց գիտէք արդեօք, թէ ինչ հնշանակէ սահմանադրութիւն։ Նա, ով տալիս, պէտք է գիտենայ, ինչ է տալիս, բայց ես սորա վերայ չեմ յամառում։ Ես ճանաչում եմ իմ վերայ դրած պարտականութեան բոլոր նշանակութիւնը։ Իբրև Օսմանցի, որ վարում է բարձրագոյն պաշտօն տէրութեան մէջ, ես երկու պարտականութիւն ունիմ. Որքան ես ճանաչում եմ իմ պարտաւորութիւնս իբրև Օսմանցի, այնքան էլ պէտք է ճանաչեմ նոյնն իբրև պաշտօնատար անձն։ Ցաճիին, որ չէ կատարում իւր պարտքը դէպի երկիրը, պատասխանատու է միայն իւր խղճմտանաց առաջ, իսկ մեծ վեզիրը պատասխանատու է թէ իւր խղճի և թէ ազգի առաջ։ Ես պարծենում եմ նրանով, որ խիղճս չէ կարող ինձ յանդիմանել, ես կցանկայի ունենալ իրաւունք պարծենալու և ազգիս առաջ։ Ահա արդէն հինն օր է, որ դուք մերժում էք ընդունելու իմ առաջարկութիւնքս, այլապէս ասեմ, դուք չէք տալիս արհեստաւորին այն գործիքներն, որոնց նա կարօտ է։ Առանց գործիքների ես աշխատել չեմ կարող, իսկ այն գործիքներն, որոնք ես ունիմ, պիտանի են միայն կայսերութիւնը քանդելու և ոչ վերականգնելու համար։ Ուստի և ես խնդրում եմ ուրիշին յանձնել այն պաշտօնն, որ դուք դրել էք ինձ վերայ 23 յունվարի 1857 ամի. Միջհատ։

Կ. ՊՕԼԻՍ

(Թղթակցութիւն "ՄԵԳՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ,,

Լրագրէն)

Ձեզ գրած վերջին նամակիս վերի շատ նշանաւոր դէպքեր պատահեցան զորս դուք ևս անշուշտ իմացած էք, դէպքեր որք Ցաճկաստանի պատմութեան մէջ անտարակոյս մեծ էջեր պիտի գտնին. Քոնֆերանսը կը ցրուի, ներկայացուցիչք կը դառնան Մայրաքաղաքն, հայրենասէրն Միդհատ կաքսորուի, և կարծեմ Ցաճկաստանն այսպէս դէպի կործանում մի մեծ ոստում ևս կընէ։ Եթէ սոյն պահուս Ցաճկաստան գաւառ մը ի զուրս հանէ իւր բաբելական ծոցէն, կամ Տիէր բարերարութիւն մի ընէր և տաճիկ լինէր, թերևս մի փառաւոր դարագլուխ բացուէր պատմութեան մէջ։

Դառնանք մեր պաշտօնին։

Լաւ կայ եթէ Սուլտանը խենթ ըլլար է. եւրոպացին վերջին թղթատարով հասած լազգիրք կը հաստատեն այս լուրը. խեղճ Ցաճկաստան երբ արդեօք ուղեղը հաստատ թագաւոր մի պիտի ունենայ։ Բայց զարմանալին սա է, որ տեղս այս վերարերութեամբ խօսք չկայ հաստատ։

Գաւառներէն հասած տեղեկութիւնք տխուր են. աւարառութիւնք, բռնութիւնք, անիրաւութիւնք դեռ պատահումն են. տես նենք Ցաճկաստանի մեծամեծ խոստմանց արդիւնք ինչ կը լինի։

Անցեալ օրերն Ս. պատրիարքն մեծ. եպարքոսին կերթայ. ստոյգ աղբիւրներէ քաղած տեղեկութեանցս նայելով, բանակցութիւնն Հայաստանի մէջ տեղի ունեցած հարստահարութեանց նկատմամբ է եղեր։ Ս. պատրիարքն կըսէ եպարքոսին, ըստ որում Բ. Դրան մատուցուած բողոքներ և գանգատներ երբէք փոփոխութիւն մի ընել չեն տար հարստահարելոց վնասակին վերայ, ըստ որում դարձեալ նոյն չարիք օր աւուր խիստ կերպարանք մի կառնուն, ես պարապ տեղը ինչու նստիմ, և պարիարքութիւն վարեմ, և ազգն զուր ծախուց ներքարկեմ, ես այսօրուընէ իմ հրաժարականս տուած եմ։ Զգիտեմ, եպարքոսը ինչ պատասխան տուեր է այն ատեն։ Ի վերջոյ կիմանանք, որ Օտեան Գըրիդոր էֆ. (խորհրդական հասարակաց շինութեանց պաշտօնէին) եպարքոս պարիարքարան ղրկեր է, ըսելով՝ Թող չհարժարի, կաղաչեմ, բոլոր այդ չարեաց առաջն պիտի առնուի։ Ասոր վերայ պատրիարքը կուզէ Սուլտանին ներկայանալ, ըսելով՝ մինչև հիմայ մեր բողոքներն և գանգատներն եպարդոսաց ըրինք, նոքա մեզի շատ խոստումներ ըրին, բայց շատ արդիւնք չունեցան սոքա, ինձ կը մնայ այժմ երկրին վհատական դիմել, տեսնանք նա ինչ պիտի ըսէ։ Եպարքոսը պատրիարքին սոյն խնդիրքն մերժեր է։ Ինձ կը թուի՝ թէ այս բանիս պատճառը աւելի, գուցէ, թագաւորին յիրաւի խնդիր ըլլալն պատրիարքին իմացնել չուզելն է։ Ս. Պատրիարք իւր հրաժարականը տուաւ երեսփոխանական ժողովոյ. արդիւնքը կիմացնեմ Ձեզ։

Ինչպէս ձեզ իմացուցած եմ իմ նախորդ նամակաց միայն միջոցաւ, թէ մայրաքաղաքիս մէջ Արարատեան անուն ընկերութիւն մի հաստատուած է, որոյ նպատակն է Հայաստանի մէջ դպրոցներ բանալն. առ այս արդէն պ. Փորթուգալեան քէնի ղրկուած եր ի Հայաստան. և իբ տեղեկագրոյն կսպասուէր գործի սկսելու համար Ցեղեկագիրն առինք. առաջին վարժարանը բացուեցաւ Վանի Աչեր գիւղի մէջ. պէտք չէ մոռանալ որ սոյն վարժարանը երկսեռ է։

Վ.

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

ՊԱՏԿԵՐՆԵՐ ԱԽԱԼՑԽԱՅԻՆԵՐԻ ԿԵԱՆՔԻՑ

—

Մի օտարական և մի տեղական բնակիչ, երկուքն էլ հայ, փողոցում խօսում են իրարու։ Օտարականը գովում է Ախալցխան և նրա հաբրստութիւնները։ Ձեր լեռները, ասում է նա, մի մի ոսկու հանքեր են, ձեր քաղաքի չորս կող հողերը—մարգարտի բովեր, ձեր երկնքի ամպերից արծաթի կոյտեր են կախ ընկած, ձեր վաճառականութիւնը կարող էր մինչև Հընդկաստանի հարուստ ափերը տարածուիլ, եթէ դուք տեղեկութիւն ունենայիք կողմնացոյցի մասին... Դուցէ այդ մասամբ իրաւացի լինէր պատասխանում է տեղացին, բայց մեր հարբուսաւթիւնները բոլորը ձեզ նման օտարականների գրպանները լցուելուն և ամեն մի օտարական մեր փողերը կամաց կամաց գլխովով միմիայն այդպիսի օդերևութաբանութեան դասեր մեզ տալն ու մեզնից գնացին։

—

Մեր ուսումնարանները փակուելու են, հարցրուց մինը երկրորդից։—Ասում են թէ այլ ևս փող չկայ, վարժապետներին տալու, պատասխան եղաւ նորան։

Մեր մեծաւորին (կարապետ Աբգեալեանցոս) թողած փղերն ինչ եղան, ոը գնացին։

Այժմեան մեծաւորները, ասում են, իրենց փորերը քաշելու միտք և ախորժակ ունին...

Ժամին փողը ուռել, չարացած վրայ տուեց, մի վաթսուն տարեկան ծերունի, չվայելեն։

—

Վարժատան տղայքը արձակել են, հարցնում էր մի պատառ կին միւսին։

Էա, կըսեն թէ անձրևներուն կամիլները երդիկը խխմեցուցեր են։

Աստուած բանն յայդուէ լինի Սուքիաս վարդապետին. թէ որ նա չլինէր, ու Սրբազանին համար նոր տուն չշիներ, հիմի անոր գլխուն ալ կկաթեր, պատասխանեց երրորդը։

—

Այսօր խորհրդարանում ժողով կայ, չես գընում, ասաց մի իրաւասու միւսին։

Ոչ։—Ինչու համար։—Խօսածներից մի բան չեմ հասկանալ։

Չէ որ թարգմանում են։

Իրենց չընչին եկող բաները միմիայն։

—

Մեծաւորին (կարապետ Աբգեալ.) գերեզմանը պիտի չինեն, հարցրեց մի մարդ, հկեցոյց գաւթում, միւսին։

Ասում են թէ կշինեն երբոր մեծաւորը անդրուազ աշխարհից հարկաւորեալ ծախուց փողը ուղարկէ, պատասխան եղաւ։

—

Տիրացու, ծննդեան տօնին, քանի՞ մանէթ ձեռքդ փող ընկաւ. հարցրուց մի աչխարհական մի աղքատ լուսարարին։

Հինգ մանէթ, պատասխանեց լուսարարը։

Իՙնչ արիր։

Մէկ մանէթ տուի մսի ու եղի, մէկ մանէթ տանս քահանայի ու տիրացուին տնօրհնէք, երեք մանէթն էլ տուի Սրբազանին, նրա հետ չրջող աւագ քահանային և սարկաւագին դարձեալ տնօրհնողներ։

—

Ինչիցն է որ վերջին օրերումս տէրտէրները չատ չատ վախճանում են, ասաց մի մարդ մի քահանայի։

Հաւատացիր. որդի, որ բացի աղքատութիւնից և խեղճութիւնից, ուրիշ պատճառ չկայ։—Գոնեա քահանայից թիւը քչացնեն, որ միւսների վիճակը փոքր ինչ լաւանայ։

—Աղճանողների փոխարէն արդէն կանդիատաններ չատ կայ։

—

Ինչու համար Ախալցխայում գործերն ու առուտուրները այս աստիճան դադարեցան, արճանոցի մէջին հարցրեց մի արհեստաւոր մի վաճառականից։

Նրա համար որ, պատասխանեց վերջինը, վաճառականաց մօտ դտնուած փողերն բոլորն էլ տեղագծերի և խնդրագիրների տրուելուց մինչև որ Ախալցխայում նոր դատքաններ չհինեալ հարցը վերջապէս վճռուելուց։

—

Ախալցխայում Цеховое Правленіе պիտի բացուի, հարցրին մի արհեստապետից։

—Գուցէ բացուի երբ որ քաղաքային վարչութեան ծառայողները ձեռք վերցնեն իրանց ռոճիկներից։

Ի՞նչ.՞այդպիսի մի միտք կայ նրանց մէջ։

— Ռոճիկները չատացնելու մեծ ջանք և ճիգ կայ։

Չէ որ անդամներից երկուսը Ձրի են ծառայում։

Ձրի ծառայող գլխաւոր՞ անդամը վաղուց է որ փոշմանել է այդ իւր անգործնական որոշման մասին։

Թող ուրեմն դուրս գայ։

Սպասում է որ մինչև հինայ գլխաւոր անդամ անուն կրնայ ռոճիկը ստանայ։

—

Ինչի հասարակական գործերը կաղ ի կաղ են առաջ գնում, հարցրեց մի երիտասարդ միւսին։

Որովհետև վարչութեան ծառայողները չատ անգամ եւ արտօնութիւնով զբաղուած են լինում, պատասխանեց երկրորդը։

—

Ինչու համար գարու և խոտի գները այս աստիճան թանգ են Ախալցխայում, հարցնում էր մի նորեկ վնասուորական աստիճանաւոր տեղական աստիճանաւորին։

—Որովհետև գարին և խոտը մեծ քանակութեամբ գաւառի գիւղեր են կրում վաճառականները, պատասխանեց ընկերը։

Վա՜հ ինչու համար, դաւառում խոմ զօրք և ձիանք չկան։

Այդ իրաւ է, բայց գաւառի համար գաւառապետի որոշած գներն աւելի բարձր են քան քաղաքի համար քաղաքային վարչութեան որոշած գներն։

Ինչու։

Որովհետև, պարոն գաւառապետի կարծիքով խոտը և գարին գիւղերում այն ժամանակ էժան գին կունենան, երբոր քաղաքում նրանց էժան տան։

Գանձակ, Երևան, Թաւրիս, Թէլաւ, Թիֆլիզ, Հ. Նախիջևան, Ղզլար, Մեծ-Ղարաքլիս, Մոզդոկ, Մոսկվա, Ն. Ագուլիս, Նուխի, Շամախի, Շուշի, Ս. Էջմիածին, Սիմֆերօպօլ, Սղնախ և վ. Ագուլիս։

Ընդհանուր ժողովը դեռ ևս շարունակում ենք։

Ե. Նազարեանց.

Մի օրիորդ կամենում է պաշտօն ունենալ երեխայոց մօտ. Համաձայն է գնալ և թիֆլիսից դուրս։ Դիմել հետևեալ հասցէով՝ կաթոլիկաց փողոց տուն Զիքոանի № 10.

1 (3)

Լոյս տեսաւ Ֆրանց Հոֆմանի „Հաւատարմութիւնը ամեն արդիւնքներին գերի է՝՝ անունով գրքի հայերէն թարգմանութիւնը, Ցարութիւն Առաքելեանցի աշխատութեամբ և ծախվում է 1) Կովկասեան Գրավաճառանոցում (պ. Զ. Գրիգորեան և Ընկ.), 2) պ. Եագոր Ցարութիւնեանցի Թէլի խանութում (Սիոնի հանդէպ) և 3) Թարգմանողի մօտ։ Գինն է փոստի ծախսով 40 կոպ։

„ԱՆՆԿԱՕՏՆԵՐ“-ի

Երկրորդ հատորը պատրաստելով, հրաւիրում ենք ցանկացողներին բաժանորդ գրուիլ այդ գրքին, որի վերջում և կ'տպուին նոցա ազգանունները։ Բաժանորդագրութեան գինը 40 կ. է, իսկ սպառուելուց յետոյ գիրքը կարժենայ 50 կոպէկ։

Ստորագրութիւն բացել ենք հետևեալ քաղաքներում և գիւղերում։

Ախտարխան, Աղէքսանդրապօլ, Բագու, Գանձակ, Երևան, Թաւրիս, Թէլաւ, Թիֆլիզ, Հ. Նախիջևան, Ղզլար, Մեծ-Ղարաքլիս, Մոզդոկ, Մոսկվա, Ն. Ագուլիս, Նուխի, Շամախի, Շուշի, Ս. Էջմիածին, Սիմֆերօպօլ, Սղնախ և վ. Ագուլիս։

Ընդհանուր ժողովը դեռ ևս շարունակում ենք։

Ե. Նազարեանց.

Благотворительное общество-ի օրիորդական դրիավարժ ուսումնարանը ճշմարիտ է որ նեղ դրութեան մէջ է, հարցնում էր մի ուսուցիչ միւսին։

Այո, պատասխան եղաւ նրան։

Ինչու համար։

Որովհետև 54 բարեգործ անդամներից միմիայն 10-ն են վճարել իւրեանց նուէրքը։

Ցետոյ, ընկերութիւնը այդ մասին չմտածեց, մի կարգադրութիւն չարեաւ։

Ուզում էր անել, բայց քաղաքական ժողովարանում խորհրդի ժամանակ խեղճ կորաձէի, ուսումնարանի տեսչի, ձայնը փորն ընկաւ և ժողովին զեկուցում անելու նա չկարողացաւ։

Միւս անդամները ինչ արին։

Միւսների մասին տեղեկութիւն չունիմ. միայն այսքանս գիտեմ որ ընկերութեան մի պատուաւոր անդամի ձայնը նմանապէս փորն էր քաշուել և նա ևս այնպէս կամաց կխօսէր, որ ժողովի նախագահը նրա խօսքերը նորից մի առ մի ժողովին կրկնելու հարկադրուած էր։

—

Հայ Թատրոնասէրների խումբը ինչ եղաւ հարցնում էր մի վաճառական մի թատրոնասէրից։

Ինքնակառավարութեան չօրչօփին ասաց եկաւ, պատասխանեց թատրոնասէրը։

Խմբագիր Պ. ՍԻՄԷՕՆԵԱՆՑ

Հրատարակիչ Հ. ԷՆՖԻԱՃԵԱՆՑ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Գուրս եկաւ ևամուղի տակից

ՍՈՒՍԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԼԻԱԿԱՏԱՐ ԵՐԳԱՐԱՆ

Երրորդ հատորը, որ բաղկացած է ազգային երգիչ-ներէ զանազան երգերից, բաւական ծանօթութիւններով երգերի վերաբերեալ բառարանով և 400-ից աւելի առածներով։ Գինն է 1 ռ.։ Վաճառվում են ինչպէս այս, նոյնպէս և սորա առաջին և երկրորդ հատորները գլխաւորապէս Թիֆլիզ պ. Զաքարիա Գրիգորեանցի և Ընկ. գրավաճառանոցում. Բագու Հայոց Արդասիրական Ընկերութեան գրադարանում. Գանձակ պ. Ներսէս Տէր Ներսիսեանցի մատաղինում. իսկ մի քանի քաղաքներում իմ թղթակից—քարեկամների մօտ։

Յանկացողները կարող են դիմել յայտնելով իրանց ճիշտ հասցէն, կամ յիշեալ տեղերը, կամ „ՍՈՒՍԿԻ,, Հրատարակչին այսպէս. Аваку Лазаревичу Григорьеву, въ Баку.

ДОЗВОЛЕНО ЦЕНЗУРОЮ ТИФЛИСЪ 5-го МАРТА 1877 г. — Типографія А. Энфіаджіанцъ и К-о — Տուն Բժշկապետ Մ. Ռօտինեան